ԳՐԵՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ գրականության ամբիոն
ՀՏԴ 821.19.0

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՔՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԴՐԱՄԱՆ, ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Նարեկացի, Մեծարենց, քնարական հերոս, «Մատյան», բանաստեղծություն, աստված, տառապանք, մահ, հույս, լույս, փրկություն:

Ключевые слова и выражения: Нарекаци, Мецаренц, лирический герой, стихотворение, «Матян», стихотворение, бог, страдание, смерть, надежда, свет, спасение.

Key words and expressions: Narekatsi, Metsarents, lyrical character, “Matean”, poem, god, suffering, death, hope, light, salvation.

Գրական արժեքները չափող ամենահզոր գործոնը ժամանակն է, բայց վերջինս անզոր է իսկական հանճարների դեմ: Ճշմարիտ բանաստեղծն այնպես է տիրապետում խոսքի արվեստին, որ դուրս է գալիս տարածաժամանակային սահմաններից, դառնում տիեզերական, հավերժական: Այս տեսանկյունից որոշ բանատեղծներ կարող են իրար կողքի կանգնել, հատկապես եթե սրան ավելանում է զգացմունքների շիկացման այն աստիճանը, որով նրանք ստեղծում են կյանքի բանաստեղծությունը, այն դարձնում ուղենիշ գալիք ժամանակների համար: Հայ գրականության պատմության մեջ այդ շիկացումները տեսնում ենք 10-րդ դարում՝ Գրիգոր Նարեկացի, 20-րդ դարասկզբին՝ Սիամանթո և Միսաք Մեծարենց: Սրանով ապացուցվում է, որ հայ ժողովուրդը, իսկապես, ունեցել է իր գրական ժամանակը: Այս առումով անհամեմատելի են նույնիսկ Դանտեն ու Նարեկացին, Վերլենը և Սիամանթոն կամ Մեծարենցը, և ժամանակն է ազատվելու փոքր ազգի հոգեբանությունից, ավելի համարձակ ներկայացնելու մեր արժեքները համաշխարհային գրականության համապատկերում:

Ի՞նչ կապ ունեն միմյանց հետ տարբեր դարաշրջանների երկու հանճարները՝ Նարեկացին և Մեծարենցը: Մինչ ստեղծագործական մասնավոր դրսևորումներին անցնելը, նախ Մեծարենցն ինքը մատնում է կապը Նարեկացու հետ: «Նարեկացիին հետ» հոդվածը գրել է, երբ հիվանդությունը և անբարեհաճ միջավայրը ծվատում ու ոչնչացնում էին նրա հիվանդ հոգին: Մեծարենցը Նարեկացուն անդրադարձավ ոչ թե «Մատյանը» քննելու նպատակով, այլ գտնելու համար այն ափը, որը կխաղաղեցներ նրա տառապած հոգին: Նարեկացու համար այդ ափը

աստված էր, Մեծարենցի համար՝ աստծու մեկնիչը՝ Նարեկացին, որին պիտի փարեր այնքան, մինչև հանդիպեր տեսիլքի ձևով. «Ու բոլոր ուրվագիծներուն ու պատկերներուն մեջեն, որոնք անոր շրջանը կը՝նեն հիմակ, բոցով շրջանակված դիմագիծ մը, հայեցողի միստիք, մշուշոտ, աղոթավոր կենդանագիր մը կ՝որոշագծվի հոն մինչև ճակատին ակոսները՝ զորս Մեղքի գաղափարին արորն է քաշած. մինչև աղերսարկու աչքերուն թախծոտ նայվածքը՝ աստվածյան հուրով մը տոգորված. ու մինչև շուրթերուն աղոթկեր երերումն ալ: Նարեկացի՜ն է. սրբության իղձին կրակովը վառված անշեջ մորենին, մեծ աղոթասաց բանաստեղծը՝ որ կը հառաչէ»[1]: Նարեկացու դեմքի, հայացքի, աչքերի այս կենդանի պատկերները, որ ամեն հատվածի ու շարժումի մեջ կրում են տառապած հոգու կնիքը, անշուշտ, Մեծարենցի՝ Նարեկացու միջոցով իր ցավերը դարմանելու, իր հարցերին պատասխան տալու մասին են վկայում:

«Մատյանի» սկզբում Նարեկացին խոսում է մեղքերի պատճառով մարդկային հոգու և մարմնի ստացած անթիվ-անհամար վերքերի մասին. «Մանաւանդ բժշկութիւն իսկ չկայ՝ անձս կործանող որսողի մահաբեր բերանի խայթերից եւ ժանիքների խածերից խոցուած բազմավտանգ, անողջանալի սաստիկ վէրքէրիս»[2]: Մեծարենցի առաջին բանաստեղծությունն էլ կոչվում է «Մարմնի վերք, սրտի վերք», որտեղ դիմելով աստծուն՝ բանաստեղծը խոհափիլիսոփայորեն բացահայտում է հոգեկան և ֆիզիկական ցավերի տարբերությունը.

Մարմնի վերքը սպեղանի ունի բույժ,
Անցնելով նա մոռցուկ կ՝ըլլա շատ կանուխ,
Զանգակ չունի նա տխրահունչ, մահազույժ.
Սրտի վերքը մինչ գերեզմանն երկարած
Ուղի մ՝ունի, արցունքներու զերթ մեկ ուղխ.
Սպեղանին անոր երկինքն է պահված: (ԵԼԺ, 19)

Ահա, սրտի վերքը՝ հոգեկան ցավը, առնչվում է մահվան հետ, որից խույս տալու համար Նարեկացու պես Մեծարենց էլ հայացքը հառում է երկինք: Մահվան սարսափը վերջինիս համար նույնն է, ինչ Նարեկացու

[1] **Միսաք Մեծարենց,** Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 265 (Այսուհետև այս հրատարակությունից արվող մեջբերումները կնշվեն շարադրանքում):

[2] **Սուրբ Գրիգոր Նարեկացի,** Մատեան ողբերգութեան, Երեւան, 2008, էջ 18 (Այսուհետև այս հրատարակությունից արվող մեջբերումները կնշվեն շարադրանքում):

համար աստվածային ահեղ դատաստանը: «Ծիածանում» Մեծարենցը որոնում է «հույսի ափունքը», ինչպես Նարեկացին՝ «Մատյանում», իսկ անվերջ այս որոնումները վկայում են, որ նրանք ազատված չեն մահվան հետապնդումներից: Հետաքրքիրն այն է, թե ինչպես են ընկալում երկու հանճարները մահվան գաղափարը և ինչպես են ձգտում դրանից խուսափել:

Նարեկացին չի վախենում մահից, բայց աստվածային մերժման սարսափը յուրօրինակ մահ էր նրա համար: Եթե նա փորձում է խուսափել մահից մարդու մեջ լուսավոր որակներ գտնելու ճանապարհով, ապա Մեծարենցը սկսում է որոնել լուսավոր տիրույթներ, որտեղ մահը չի լինի սարսափելի: Մեծարենցի մոտ միայն «Մթնշաղներ» բանաստեղծության մեջ ենք տեսնում գրողի անբավականությունը մահվան գաղափարից, որը ձգտում է հաղթահարել սիրո գաղափարով, բայց վերջինս նահանջում է.

Անձրև կ՝իջնե հոգվույս մեջ, կըզգամ մահվան սրսըփուք,
Ձեռքս է պարապ մընացեր դատարկին մեջ սըգավոր: (ԵԼԺ)

Այստեղ կարևոր է չշփոթել «Նավակները», «Մեղուները», «Արևին» և նմանատիպ այն բանաստեղծությունները, որոնցում ոչ թե մահվան տառապանքն է, այլ նրա հետապնդումից ազատվելու համար լույսի որոնումը: Լույսի անվերջ որոնումով են Նարեկացին և Մեծարենցն ընդհանրանում, տիեզերական եկեղեցու վարդապետն օգնում է Մեծարենցին գտնել չմեռնելու գաղտնիքը. պատանի բանաստեղծը հասկանում է, որ ֆիզիկական ոչնչացումը դեռ մահ չէ:

Համեմատելով մահվան սարսափն զգացած երկու վաղամեռիկ բանաստեղծներին՝ Դուրյանին և Մեծարենցին՝ տեսնում ենք, որ վերջինիս կենսունակությունն անհամեմատ շատ է, քանզի նա իսկապես կարողացավ մահվան կողքին ապրել կյանքի տարածության մեջ, իսկ Դուրյանն ընկղմվեց մահվան տարածության մեջ, որքան էլ որ կյանք խնդրեց, տրտնջաց, ըմբոստացավ, վիճեց ու զղջաց: Բացի այս, թեև Դուրյանն էլ էր ապավինում Աստվածաշնչին, նա ինչ-ինչ կասկածներ ուներ աստծու նկատմամբ, իսկ Մեծարենցն ապավինում էր և՛ Աստվածաշնչին, և՛ Նարեկացուն: Մեծարենցի մոր պատմելով ենք իմանում, որ կյանքի վերջին օրերին միշտ մոտը պահում էր Աստվածաշունչը և «Մատյանը»: Կարդացած լինելով Անդրե Ժիդ, Լամարտին, Մետերլինկ, Իբսեն, Հաուպտման՝ Մեծարենցը նրանցից ոչ մի մեջբերում չունի իր գրադատական ժառանգության մեջ, որովհետև իր աշխարհը չեն եղել, վերոնշյալ այլազգի գրողների համար մահն անհաղթահարելի երևույթ է, իսկ Նարեկացին Մեծարենցին տվել էր մահից խուսափելու, դեպի լույսը ձգտելու բանալին. «Որքա՜ն քաղցր պիտի ըլլար այս ամպամած գիշերոտ տիվին մեջեն ընդնշմարել հանկարծ կապույտ բարությունը՝ որ ճառագայթով մը ժպտեր

շոգիի սրահակներուն մեկ ծերպեն՝ և աղերսագին կանչե՛ր.

Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ.

Բայց ահա՛, ճառագայթն է. «ամենափայլ ճառագայթը», «խոստովանեալ լոյսը», «արփիացնցուղ ցօղը», «տօնելի խոնարհութիւնը», «փրկական համբոյրն» է այդ ոսկեթել նուրբ շառայլը՝ որ կը սահի հոգիին խորը՝ քայքայված երազներու տրցակը ժապավինելու» (ԵԼԺ, 266): Նույնիսկ Չարենցը, որ գրում է «Ծիածան» ժողովածուն, դարձյալ չի կարողանում չենթարկվել մահվանը. նա ընկալում է մահն իբրև ավարտ և գոնե փորձում գունազարդել, այն կոչում «մի լուսավոր առասպել»: Սա խուսափումի ինչ-ինչ երանգներ ունի: Մեծարենցը ո՛չ խուսափում է, ո՛չ գունազարդում, այլ հաշտություն է հաստատում իր և մահվան միջև, նրա հետ համագործակցում և համագոյակցում:

Քնարական հերոսի դրաման կարող է կարող է ունենալ հասարակական և անհատական ակունքներ, անձնականը կարող է վերածվել հասարակականի կամ չվերածվել, հասարակականն էլ կարող է կենտրոնանալ անձի ներքին մտասևեռումների մեջ կամ հայտարարությունների ձևով արտահայտվել: Այս առումով Նարեկացին տառապանքն անվերջ կուտակում է իր անձի մեջ, գրում է իր եսի դիրքերից հանուն համայնի: Միայն այդ գիտակցումով կկարողանար հայտարարել, որ ինքը մի օր աստված կդառնա, քանի որ հենց տերը համայնը կրում է իր մեջ: Մեծարենցն անընդհատ փորձ է անում իր անձից՝ «Եսի ցուրտ առանձնարանից» դուրս պրծնել, հակվել դեպի հասարակականը, որոնել իր ցավի տեսակը և հանգստություն գտնել:

Նարեկացու քնարական հերոսի ապրումներից մեկը՝ մահվան սարսափը, կարմիր թելի պես անցնում է «Մատյանով», իսկ Մեծարենցի քնարական հերոսի այդ տրամադրություններն անցողիկ բնույթ ունեն, ոչ թե նրան հավերժ հետապնդում են, այլ մի պահ բոցկլտում են ու անցնում: Նա, ամեն օր անցնելով մահվան պարունակներով, կամքի ուժով բացում է իր ճանապարհը, և լույսի նրա որոնումները՝ «Նավակները», «Մեղուները», «Սիրերգ», «Կայծեր», «Արևին», մեծ հաշվով արդեն հայտնաբերված լույսն են, թեև մաշվող, անհետացող, բայց անընդմեջ որոնվող ու գտնվող լույսը: «Ըսպասման հիվա՛նդն եմ»,- բացականչում է բանաստեղծը «Նավակներում», սպասում արդեն հայտնաբերած այն լույսին ու հույսին, որ «մեկնեցան բաղձանքող ակաղձուն», «հեռացան ծրփանուտ երազի ափունքեն».

Գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ՝անցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլրցուն: (ԵԼԺ, 62)

Ակնհայտ է, որ գերիշխում են պայծառ, լուսավոր գույները: Նույն ծիրանի, ոսկու երանգներն ենք տեսնում «Մեղուներում».

Կիսաթափանց մշուշներու ապրշում քողքը պատռելեն
Եվ հածելեն մեջն արևին ոսկեծաղիկ մառախուղին:
Արևակի, սուտակներու ու զյումրյութի
Փաղփուն երանգը ծրծելով իրեն չորս դին... (ԵԼԺ, 63)

Պետք է անդրադառնանք Մեծարենցի քնարերգության մի կարևոր առանձնահատկությանը. առաջին հայացքից թվում է, թե նա բազմաթեմա բանաստեղծ է՝ անհատի դրամա, սեր, գյուղանվագներ, մարդերգություն, բայց ներքին ենթաշերտերում միաթեմա է, որովհետև նրա ստեղծագործության կենտրոնում կանգնած է մահվանից ազատվել ձգտող մարդու կա՛մ դրամատիկ, կա՛մ փրկությունը հայտնաբերած կերպարը. բոլոր գործերն ուղղված են մահվան գաղափարի անտեսմանը, «Սպասումը դառնում է կենտրոնական զգացում, տիրապետող զգացում, թափանցում գրեթե բոլոր խոհերի, բոլոր պատկերների մեջ»[3]: Նույնիսկ սիրային թեմայով գործերում խոսում է սիրո, վայելքի մասին, որպեսզի խույս տա մահվան հետապնդումներից և մտնի կյանքի տարածություն: Լավագույն օրինակը «Սիրաձայն հծծյուններ»-ն է: Բանաստեղծի տենչը, աղջկա գլուխն իր գրկում շոյելու ցանկությունը, նրա ջինջ նայվածքի կարոտը, «վարդաբույր շունչը» զգալու, «զգվանքն ըմպելու» ցանկությունն ուղղված է բանաստեղծի մրսող տենչը՝ ասել է թե մահվան զգացողությունը փարատելու ձգտմանը: Իր միաթեմայնությամբ էլ է Մեծարենցն ընդհանրանում Նարեկացու հետ: Վերջինս «Մատյանում» թվարկում է մարդու մեղքերը, խոսում պատժի, աստվածային մերժման ու ահեղ դատաստանի, չարից ազատվելու, հույսի, լույսի և փրկության մասին, բայց ամբողջ ստեղծագործությունը տիրոջ նկատմամբ պաշտամունքի արտահայտություն է:

«Մատյանի» 95-րդ գլուխն ամբողջովին կազմված է աստծուն ուղղված ապաշխարանքի և հույսի խոսքերից, որ կառուցվածքային առումով հիշեցնում է «Հայր մերը». «Եւ պատուական արեանդ շնորհիւ, որ միշտ մատուցւում է ի հաճութիւն կամքին Առաքչիդ՝

Թո՛ղ վերանան պատիժները մեղաւոր դատապարտեալիս,
Ներուե՛ն յանցանքները,
Փարատուի՛ ամօթը,
Մոռացուե՛ն խայտառակութիւնները,
Բարեփոխուի՛ դատավճիռը...
…Սպառուե՛ն ողբերը, հատի արտասուքը,

[3] **Թամրազյան Հ.,** Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 253:

Մերժուի՛ սուգը, հալածուի՛ խաւարը» (Գ. Ն., 426) և այլն:

Անշուշտ, Մեծարենցն Աստվածաշնչից ու իր ուսուցչից է ներշնչվել՝ գրելով արդեն «Արդի մարդուն հայր մերը»: Սրա հետ է կապված նաև Մեծարենցի երկրորդ գրքի «Նոր տաղեր» անվանումը, որոնք նոր էին բովանդակային առումով: Այստեղ հոգևոր որակներն առավել մեծ տեղ ունեն: Որքան նոր էր նրա «Հայր մերը», այնքան նոր էին նրա տաղերը: Եթե «Ծիածանում» տենչեր են՝ «Արևին», «Նավակները», «Մեղուները», «Սիրերգ», «Ճերմակ վարդեր» և այլն, ապա «Նոր տաղերում»՝ ապրված զգացումներ՝ «Աղերսանք», «Սիրաձայն հծծյուններ» և այլն, եթե «Ծիածանում» ուղղակի գյուղի պատկերներ են, ապա «Նոր տաղերում», օրինակ, «Ջրտուք» բանաստեղծության մեջ, տեսնում ենք գյուղական իրականությունը իր ներքին շարժումով ու համանվագով: Նմանատիպ տարբերակում կա նաև Նարեկացու տաղերի և «Մատյանի» միջև. եթե տաղերում նա որոնում է Որդի աստծուն, բայց Հայր աստծու խնդիրը դեռ չի լուծվում (հիշենք, որ Նարեկացին Սուրբ գիրքը մեկնաբանելու խնդիր ուներ), ապա Հայր աստծուն փորձում է կերպավորել «Մատյանում»:

Կրոնական առումով աստված Մեծարենցի համար այլ աստված չէր, քան Նարեկացու համար, բայց նրանց համար հույսն է գլխավոր աստվածը: Հավատը նախ պետք է հույսի տեսքով լինի, որպեսզի աստված հասկանալի դառնա. «Մարդու համար ոչինչ սարսափելի չէ, եթե կա հույսն ու հավատը: Հենց այս հույսն ու հավատն էլ պայմանավորում են միջնադարյան քրիստոնյա բանաստեղծի ու մեծ հումանիստի ստեղծագործության ինքնատիպ լավատեսական հոգին, որի հենարանը աստվածն է և նրա միածին որդին»[4]:

Նարեկացին և Մեծարենցը ապրած դարաշրջանով, մտածողությամբ տարբեր են, բայց մտածության առարկան ու տարածությունը նույնն են: Նրանց հույսը կատարյալ մարդու տենչն է, այդ գաղափարի որոնումը: Վերջինս պարզ ու հստակ է Նարեկացու Մատյանում. «Նարեկյան դպրոցի հոգևոր կենցաղավարության և բարոյագիտության հիմքում մարդու մաքրագործման, ինքնակատարելագործման, ըստ մարդկային կարողությունների աստվածացման գաղափարն է»[5]: Մեծարենցի մոտ դա նկատվում է նրա ձգտումների ձևակերպումներում: Մարդը չգիտի «Ջրտուքի» մշակին, «արիշին տակ նստած» շեր կանչող աղջկան, «Տապի նոպաների» տուն վերադարձող մշակներին ու հնձվորներին, որ

[4] **Նալբանդյան Վ.,** Գրիգոր Նարեկացի, Եր., 1990, էջ 107:

[5] **Թամրազյան Հրաչյա,** Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Եր., 2004, էջ 42:

փոխադարձաբար կատարյալ ներդաշնակության մեջ են բնության հետ: Մեծարենցը դեռ մանկուց է ապրել բնության ձայներով, զգացել բնության հետ կյանքի ներդաշնակության գեղեցկությունն ու բնականությունը: Նարեկացին պակաս չի զգացել բնությունը, քան Մեծարենցը. հիշենք «Վարդավառի տաղը», «Հարության տաղը», որոնցում շարժումն սկսվում է բնության և մարդու ներդաշնակությունից: Սա ոչ թե Նարեկացի ուսուցչի և Մեծարենց աշակերտի պարզ նմանություն է, այլ առանձնահատուկ ու առավել բարձր մի երևույթ՝ հանճարի արտահայտություն, բնությունը խորությամբ զգալու կարողություն:

Մարդիկ չգիտեն նաև անանձնական ուրախության գաղտնիքը, որին տիրապետելով կարելի է կատարելության հասնել.

Տու՛ր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական.
Ծաղիկներու՝ պես զայն ժողվեմ ճամբուս վրան՝
Նայվածքներուն մեջ ամենուն և ամեն օր (ԵԼԺ, 172):

Այսպիսով, ներքին հոգեկան տառապանքների, որոնումների իմաստով երկու գրողներն ընդհանրանում են: Նարեկացին որոնում է մարդկության փրկության ափը, Մեծարենցը՝ մարդու փրկության ափը՝ սեփական եսի դիտանկյունից: Նարեկացին առհասարակ մերժել է եսի խորհուրդը. մարդկության մեղքերը անվերջ կուտակելով իր ներսում՝ նա մենքի հետ է: Մեծարենցը գրեթե եսի խորհրդից դուրս չի գալիս, բայց իր ցավը զարմանալի ընդհանրացումով դարձնում է մենքի ցավ, եսի միջոցով գնում է դեպի մենքը: Նրանք չեն կարող և չեն մերժում մարդուն, միայն ցավ են զգում նրա ապականության համար. Նարեկացին, իբրև հոգևորական, հասկանում էր, որ սիրելով ու մարդու մեջ լուսավոր որակներ փնտրելով պիտի փոխեր նրա էությունը, նա ընտրում է քրիստոնեական կատարելության ուղին, «Պոեմը դառնում է մի օրհներգություն կյանքին, երջանիկ եզերքներին և աստծուն, այսինքն՝ կատարյալին...»[6]: «Լուսաբաղձ հիվանդ» Մեծարենցն էլ իր ցավն ու ներքին տագնապները այնքան կատարյալ է ներկայացնում, որ դարձնում է դրանք ընդհանրական, ընտրում սեփական ճակատագիրը մարդու ճակատագրի դիտանկյունից քննելու ուղին, և այն պաշտամունքը, տենչը, որ ունի Մեծարենցը լույսի, սիրո, կատարելության նկատմամբ, երբ ասում է.

Հոգիս թռչնիկ մըն է,
Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,

բնորոշ է նաև Նարեկացուն: Սա ոչ թե գրական ժառանգորդության խնդիր է, այլ մի ողջ գրականության մեջ ներքին հարազատության և դրա

[6] **Թամրազյան Հ.,** Քննադատություն, Գիրք Բ, Եր., 1985, էջ 120:

մեջ բազմազանության խնդիր, որ շարունակվել է մեկ հազարամյակ՝ 10-րդ դարից մինչև 20-րդ դար՝ Նարեկացուց մինչև Մեծարենց:

Գ. Գասպարյան

Նարեկացու և Մեծարենցի քնարական հերոսների դրաման, գրական առնչությունները

Ամփոփում

Հոդվածը նվիրված է տարբեր դարաշրջանների երկու հայ հանճարների՝ Գրիգոր Նարեկացու և Միսաք Մեծարենցի ստեղծագործական առնչությանը և հոգևոր հարազատությանը: Նախ նկատելի է Մեծարենցի հոգևոր և աշխարհայացքային կապը Նարեկացու հետ. համաշխարհային գրականության մեծերին կարդացած լինելով հանդերձ՝ Մեծարենցը ապավինում է միայն Նարեկացուն: Առավել ակնհայտ են ստեղծագործական ընդհանրությունները Նարեկացու տաղերի, «Մատյանի» և Մեծարենցի բանաստեղծությունների միջև՝ տառապանք ու մահվան սարսափ, հույսի, լույսի անվերջ որոնումներ, ստեղծագործական միաթեմայնություն և այլն, վերջապես, մարդկության կատարելության և փրկության տենչ. Նարեկացին իր մեջ է կուտակում բոլոր մեղքերը հանուն մարդկության, Մեծարենցն էլ իր ցավը դարձնում է մարդկության ցավը, սեփական ճակատագիրը քննում մարդկության ճակատագրի դիտանկյունից:

Г. Гаспарян

Драма лирических героев Нарекаци и Мецаренца, литературные связи

Резюме

Эта статья посвящена двум армянским гениям разных эпох: творческому отношению и духовному родству Григора Нарекаци и Мисака Мецаренца. В первую очередь заметна духовная и мировоззренческая связь Мецаренца и Нарекаци. Вместе с тем, что Мецаренц был начитан великих поэтов мировой литературы, он полагается только на Нарекаци. Наиболее очевидны творческие объединения между песнями, «Книгой скорбных песнопений» Нарекаци и стихотворениями Мецаренца – страдание и страх смерти, бесконечные поиски надежды, света, творческая "однотемность" и т.д., наконец, жажда идеализации и спасения человечества, Мецаренц же

делает свою боль человеческой, собственную судьбу изучает с позиции человеческой судьбы.

G. Gasparyan

The drama of Narekatsi's and Metsarents's lyrical characters (heros), literary connections

Summary

The article is dedicated to creative and spiritual relations of two armenian geniuses Gregory of Narek and Misak Metsarents of various periods. First, it's noticeable the spiritual and ideological connection of Metsarents with Gregory of Narek: though Metsarenc had read works of Greats of world literature, he relied only on Gregory. The most obvious are the creative affinities between Gregory's songs, "Matean" and Metsarents's poems: suffering and fear of death, endless quests of light and hope, etc. finally human craving for perfection and salvation. Gregory of Narek accumulates in himself all the sins for humanity. Metsarents makes his pain the pain of humanity and examines his own fate from the perspective of human's fate.